

պետը կը կամենայ նուիրատուութիւններ հաւաքել, կարող են նրա մասին մանրամասն տեղեկութիւններ տալու: Մենք երաշխաւորում ենք մեր մշտական թղթակցի հաղորդած տեղեկութիւնները ճշմարտութիւնը: Եթէ հայ հասարակութիւնը հասկացել է, որ պէտք է օգնէ իր ազգին գոնէ դրամական նուիրատուութիւններ տալով, մենք առաջարկում ենք նուիրել «Արարատեան ընկերութեան» որ ինչպէս յայտնի է հայաստանի սրտի մէջ գործում է և ինչպէս հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, մտադիր է ընդարձակել իր գործունէութեան ասպարէզը, հետեւապէս աւելի էլ կարող է օժանդակութիւն:

Ստացանք խորհիւն աւագ քահանայ Բարսեղեանից ԱՅԻԱՔԱՆԱՐԻՄ յօդուտ «Արարատեան ընկերութեան» հետեւող անձինքներից հաւաքած 40 ռ.: Ստեփաննոս Վարդանեան 25 ռ., բժիշկ Գ. Գ. Տէր-Գրիգորեան 10 ռ., Կարապետ Պիճիկեանց 5 ռ.:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա.ԳԱՍԿՈՒ ՏԵՂԵԿԱԳԻՐՆ

Նրկու երեք տարիէ ՚ի վեր տեսակ տեսակ և ծանր հարստահարութեան երեսէն մեր կրած աղետ և չարարածք անկարագրելի է: Բազմաւնաբար երկրին պատահած աղետ սրտակէզ էր, բայց երանք թէ նոյն անցք մենք հոս կրէինք, քանզի նոքա իրենց սուրբ մահուամբ քանի մ'աւուր մէջ կնքեցին իրենց կենաց մատան և իրենց մէն մի տառապանաց և երկիւղին վերջ տւին:

Այն միջոցին որ Բազմաւնաբար կանայք և օրիորդներ կը լլկէին ու կը յօշոտէին, ճիշդ նոյն միջոցին մեր երկրի և Պարսկաստանի հրոսակներն ու արիւնդուշա Բիւրտերը միանալով մեր վրա կը յարձակէին:

Քանի մ'աւուր մէջ Աղբալու երկրին աւերող կողոպտելով աւեր և խուպան դարձուցին, 40-էն աւելի եկեղեցիներ կողոպտել վերջ տեղաներ քանդեցին և աղբով ծեփել վերջ գոններն այրեցին:

Այս ահաբեկութեանց երեսէն ահաբեկ և դաժ մեր ինչք ու ընտանիք առած Ս. Բարթոլիմէոսի վանքն ապաստանեցանք. բայց յանկարծ 2000-էն աւելի Բիւրտեր ունեցող զանազան խորտակելով և ունեք ալ պարսկապետները վրայէն մըջիւնի պէս ներս խուժեցին:

Այս միջոցին տիրած ողբ ու կոծ, ահ և սարսափ ու արհաւիրքն անխորհի է նկարագրել:

Մենք չէինք կրնար բան մ'ընել, զի զմեզ պաշտպանելու ոչ կարող էինք և ոչ ալ պաշտպանելու գնէր կամ այլ ինչ ունէինք:

Մէկ քանի աւուր մէջ վանքն ալ երկրին պէս մերկացել էր: Ս. Առաքելոյ դերեզմանն ալ քակեցին պատեր, յատակ, սեղան ամենն ալ քակեցին ու քանդեցին, անթիւ անասուն, գոյք, կարասիք, ոսկի, արծաթ և այլն տարին:

Այս ամէն մեր գլխէն անցած չարիք ընել տուող ոյք էին, մեր Բիւրտերն ինքնին ըրին, ոչ, այլ մեր կողմ գտնուող քանի մը Նէյսեր Ֆէթիվա տալով այս չարիք ընել տւին, որոց գլխաւորներն են, Նէյս Նուրէտինն որ անկասկածաբար գլուխ էր, նախ աս հայոց ոչխար մը գինեղով ինքն կուտէ և ապա զօրաց, իւր եղբայր Նէյս Մուհամմէտ Եմինի, իւր աղա քանան Պաշկալանցի Մուսթաֆայի, Նէյս Համիտի, և Նէյս Հասանի կրէ. «Աս որ ձեր Նէյսն եմ, ահա ինչպէս որ հայոց ոչխարն առանց դրամի կերայ, և հալալ է, նոյնպէս ես կը պատուիրեմ ձեզ հայոց ինչք ձեզ ամեն նուր հալալ է, կողոպտեցեք, իրենց արիւն թափել արդարութիւն է»:

Բիւրտերն որ արդէն վայրագ ու բարբառոս էին, սոյն պատուէրին վրա խապտ կատարել յանձնարեցին:

դեցան. չը մնաց չարիք որ մեր գլուխ չը հանեն:

Աղբալու երկրին այսօր այն աստիճան չքաւորութեան հասած է, որ շատերը սոված մահ կը մեռնին. մեզմէ շատերը դէպի Պարսկաստան գաղթած դրնէ դուռ կը թափառին. իսկ մնացածներուս կեանքն ապահով չէ, քանզի Պաշկալանցի մէջ բնակող Սալիֆա Մուսթաֆան իւր ընկերակից Նէյս Համիտի, Նէյս Հասանի և Նէյս Մուհամմէտ Եմինի խորհրդակցութեամբ 79 փետր.

1 թուականին ելաւ Բրդազ գիւղերը, Պարտաքիլ, Մարդըքիլ և այլ վրանաբնակաց մէջ նորէն իւր չար որոմներն ցանկ սկսեց: Իւր շրջապայծ օրէն մինչև ցարդ քրդերը նորէն կատաղութեամբ մեր վրա յարձակումներ և ուրիշ շարժումներ կ'ընեն. անցեալ տարի ինչք քան որ կողոպտեցին, մնացածներն ալ յիշեալ Նէյսերու թելադրութեամբ այս տարի անասնոց զոմերը ծակելով տարին: Նրբ կառավարութեան կը բողբեմք, Նէյս Համիտ, որ Նուարէի ժողովի անդամ է և գրեթէ տեղեւոյ կառավարութիւնն իրեն խաղալիկ ըրած և իրեն ահն ու աղեկութիւնն ամենուն վրայ տարածած իւր դերն կը խաղայ, (այս ալ Վանայ Գիմուր օղլուներու ղեկով է, քանզի ինքն ալ նոյն սերունդէն է, քան տարիէ ՚ի վեր երկրի քանդման բուն պատճառը Դամր օղլուններն ու Մուսթաֆա է-Ֆէնտին է), չարագործներու ընկերակից և դաժ է, իւր միջոցաւ չարագործներն ազատ կարճակուն, մեր իրաւունք առ ոտն կըրթայ. Նէյս Հասան, որ Քէմեղի Հուգուզ կը նստի, իրեն մաս ընկած չարագործաց պաշտպանութիւնն ինք կը կատարէ:

(75—79 սպանուած անձանց անունները տեղեկագրին մէջ յիշատակուած են):

Վանք և Վանքի գիւղը կողոպտել քանի մ'օր վերջը, մեր շրջակայ դրացի քիւրտներն ամեն գիշեր խումբ խումբ գիւղին վրայ կը յարձակէին, տունները քանդելով փայտերը կը տանէին, թէ և խեղճ ընտանիք անօթի, ծառաւ, մերկ իրենց յարկերու մեջ կը գտնուէին, Բիւրտերը տանիքներ քակած թէ և կանայք և աղջկունք կաղաղակէին թէ «ի սէր Աստուծոյ թող տուէք դուրս ելլիմք և ապա քակեցեք» (քանզի գոնեք բռնած էին), բայց լսոյն ոչ էր, խտատախտ քիւրտները տունները քանդելով խեղճ արարածները հողին ներքե կը մնային և մատող ուղբեր կ'ենաւ: Կրաւ կըլլային, իսկ միւսները կ'ստանէին հալիւ փրատակաց ներքե կըլլային, մերկ և խայտառակ գիւղէն կը հեռանային:

Այսուհետեւ այն գիւղի կանայք և օրիորդք չը կրնայով այլ ևս զատ զատ տուններ բնակել, զացած տեղերն խումբ խումբ կը կենային, բայց կատաղի Բիւրտեր հոն ևս կերթան և գոնեք խորտակելով ներս կը մտնեն, ճրագը կը մարեն, և կանանց ու օրիորդաց վրայ իրենց չար կամքը կը կատարեն, անչափահաս աղջկունք կ'ենադրաւ կըլլան, իսկ մնացորդներն ամիսներով անկողնոյ կը ծառայեն:

(Տեղեկագրին այստեղ ուրիշ շրջակայ գիւղերէնց մէջ սպանուող անձանց անուններն ու պարագաները կը պատմէ մի ըստ միով): Նէյսերն հայոց վերաբերեալ շատ մը հոգիւր ալ դրաւած են, որոնց համար Վանայ կառավարութեան և Բ. Դրան բողբուած է, բայց մինչև ցարդ օգուտ մը տեսնուած չէ:

Մեր գլխէն անցած որ մէկ չարիքը պատմեմք. օրեր տարիներ կուզէ որ մենք կարողանամք մեր կրած խաչակրութիւն ի դիր տնտուլ:

Այս ամէն չարիք մեր երկրի Սալիֆա և քանի մը Նէյսեր ի գործ դնելէ չը յաղեցան և այսօր դարձեալ իրենց չարագործութիւնն ևս չեն մնար, մեր կեանք գրաւել տալու միշտ հետամուտ են. ՚ի սէր Աղբալու մեր կեանք աղատելու ճար մ'ըրէք, կամ

զմեզ հնարիւք մը այս երկրէն հեռացնել տուէք և կամ քանի մը մոլեռանդ չէյիսերուն մեղինից հեռացնելու հնարք մը գտնաւ: Եւ իսկ, Աղբալու երկրի մէջ փոքր միջոցէ մը գինի հայ անուն չը պիտի գտնուի, ամենն ալ արիւնաթաթաւ գերեզման պիտի իջնեն:

(Մատիս)

«ՄԱՍԻՍԻ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ժամանակաւ բազմաթիւս Խորենացին Հայոց ապագան մարգարէացաւ ու գնաց (ողբամ զքեզ Հայոց աշխարհ): Օսմանեան և Ռուսոյ պատերազմի վերջնապէս մինչև ցայսօր գաւառական հայոց աղետները Մատիսի անկիւններէն մինչև գագաթը հասան: Յիրաւի միտք ունիւմ Բաւեններու բնական, բարոյական, կրօնական, ուսումնական, երկրագործական և նիւթական վիճակին վրայ տեղեկութիւն մը տալ: Ձեր պատուական և ազգօրուտ թերթի միջոցաւ ի գիտութիւն ազգային կեդրոնական վարչութեան և համայն ազգայնոց, բայց այժմ մեր այն գիտաւորութիւնը յետաձգելով, ներկային վրայ խօսինք: Բաւենցիւք, արդէն պատերազմէն առաջ Բիւրտ, Ձերքէզ և այլ բարբարոսաց բռնութիւններէն, զոգութիւններէն և կառավարութեան ասոնց նկատմամբ անգործադիր և թղլ ընթացք մը ունենալէն զգուշացէ՛ք: Պատերազմի տեսնել ալ շարունակ երկու տարի ոչ վատաւիսի մերն էր և ոչ երկրագործական արդիւնք, որոնց մէկ մասը կանօնաւոր զօրաց կուտայինք սէնէթով, մէկ մասն ալ բանակէն Կարին, Կարինէն բանակէր թէ և կողմ անգործապետ հիւանդ և վերաւորեալ զօրքերուն կուտայինք առանց սէնէթի ձիւ, մէկ մասն ալ Բիւրդ և Ձերքէզ և գաւառներէն եկող Թուրք Պաշայօղուգներուն, որ առանց (տիշ քիւրտի) չէին ուտեր իւղի մէջ խորոված ոչխարն ու գառը, և չէին մեկնիր գիւղերէն առանց աւաւորութեան ձի, կարպետ, պայուսակ, բանակին մէջ ուտելու համար պաշար. հարսներու արծաթեղէնք, և երբեմն ունեւոր հարսներու գլխու զարդ, ոսկիք և այլն, ասոնց ամենն ալ ստանալու համար եթէ ձեռք ձգէին կանանց այրերը, մերկ պատկեցնելով հազար ու մէկ տեսակ սարսափելի տանջանքներ կուտային, եռացեալ ջուր մարմնոյն վրայ թափելով, տաք մոխիր սրտին վրայ լեցնելով, և եթէ կանանց այրերը ձեռք չը ձգէին, այս գործողութիւնն երախայից վրայ դրժագրելով կը ստիպէին կանայքն որ բերեն իրենց զարդերը: Գիւղերու բոլոր երիտասարդներն արդէն ուլամի սայլերով բանակը կը ծառայէին. Բաւենի քան և հինգ քրիստոնեայ գիւղերէն եօթն հարիւր սայլ կը գտնուէր Կարսի և Պաշաղիտի բաւնակն, որոց հինգ հարիւրն հազիւ ձեռքեր նիս անցաւ. մնացածը մալով և սայլով և տանի չափ ալ մարդով բողբովին անհետացան: Այս ամբիւ խորին շնորհակալութիւն կը յայտնեմք Վանի Ղազի Ահմէտ Մուսթաֆա վաշային, որ երբ ստեղծել ներդրեան մէջ գտնուած միջոցաւ հեռագրաւ իրեն կը դիմէինք, ինքն ալ հայրաբար մեր վիճակին վրայ ցաւելով յատկապէս կը հեռագրէր Բոսաթէի Վիլայէթն ՚ի Կարին, որ հոգ տանէին աղքատ ժողովրդեան վիճակը բարեօրոգելու: Այն ատեն մենք ալ Կարին կերթայինք և կը դիմէինք Կարնոյ առաջնորդ Գեւ. Յարութիւն սրբազան արեւելահայոցապետ և Բաղաբալան ժողովոյ Սեծ. և ազգասէր անդամաց. ուստի անոնց ևս պարտիմք շնորհակալութիւնն իսկ յայտնել, որ ազգասիրաբար յանձն կառնուին մեր ցաւերը կառավարութեան ներկայացնել և դարման խնդրել: Բայց ի՞նչ օգուտ որ կառավարութիւնը պատերազմական ծանր զբաղմանց մէջ ըլլալով որ և իցէ դարման մը չէր կրնար մտածել և գործադրել, միայն հրաւանդելով մը կը գրէր առ կառավարին Բա-

ւեններու: Երաւ այն ատենուան մեր կառավարիչը խիստ արդարասէր և ուսումնական անձ մ'էր, Մուհամմէտ Ալի պէյ, անուամբ. բայց ի՞նչ օգուտ, որ նա ևս կարող չէր զբաւել Բիւրտ և Ձերքէզ անկանօն զօրքերն, և շատ անգամ մեր ներկայութեամբ Ահմէտ Մուսթաֆա փաշայի խօսքը կը կրկնէր ըսելով թէ «ասոնք թշնամոյն հետ պատերազմելու չեն եկեր, այլ տեղացի ժողովրդեան ստաւցուածքը կողոպտելու եկած են...»:

Տէր, ասոնց բոլորն ալ տեղի ունեցած սողող տեղեկութիւններ են: Մէկ օր, Իսմայիլ փաշան իւր բանակաւ Եփրատ հասած միջոցին Կարնոյ կառավարութեան հրամանագրին համեմատ Բաւեններու կառավարիչ Մուհամմէտ Ալի պէյ և ներքին Բաւենի կառավարիչ Յարօցի Իսմայիլ պէյ քառասուն ձիաւորով գիւղերն այցելութեան ելած էին: Նախ Հասան Ղալայէն ելլելով զայցին մինչև Տէլի Պապա բուլած գիւղը, որն որ չափէն աւելի հարստահարեալ գիւղերէն մին է: Նոյն օրը մինչդեռ իրենք Ղուկասեան Ղուկաս քէհէայի տունը նստած կը ճաշէին, վեց հարիւր անկանօն հեծեալօր եկան: Յիշեալ պէյերն այդ գիւղին վրայ աւելի զթալով անոնց հրամանատարներուն ըսին որ այս գիւղը բողբովին մերկացած էր, ոչ ձիաւորանս կար և ոչ մարդու պաշար. ուստի խնդրեցին որ զօրքը եկածին պէս կէս կէս ժամ հեռու Բրդազ հարուստ գիւղերն երթան: Տեսնելով որ իրենց խնդրը չը լուրի, ձեռնունին կեցած հրամանագրերը ցցոյց տալով սպառնայեօք խօսեցան. երբ տեսան որ անով ալ չեն լսեր, այն ատեն Իսմայիլ պէյը, որ Միւսթաֆա էր, բաւ Մուհամմէտ Ալի պէյին, Պէյ, կանաքերնիս փառնգի մէջ ինչու կը գնենք, մենք երկնք փախչինք քովի հայու գիւղը որ Ալաւա-Ագրուկ կըսուի: Երբ հիման ձիերնին որ երթան, գիւղացիք լալով ողբալով օգնութիւն կը խնդրէին: Պէյերը պատասխանեցին թէ «ինչ ընենք, պատերազմ է այսպէս կըլլայ, ուղեք չուղեք պիտի քաշէք»: Բայց այս խօսքը արտասանած միջոցին Մուհամմէտ Ալի պէյին աչքերէն արտասուք վազելը շատերը տեսնել և կը վկայեն: Իւրեքան գիւղը, որ նոյնպէս ճանապարհի վրայ է, գիւղացւոց ու տեղու հաց անդամ չը մնալուն պատճառաւ թողուցին իրենց տունները և ցրուեցան մօտակայ գիւղերը: Նոյն միջոցին Ձերքէաները գիւղը մարդ չը տեսնելով՝ բարկացան, նորաչէն եկեղեցին և դարոցը այրեցին, տուններն ալ հետզհետէ քանդելով աւերակ ըրին աւերող գիւղը: Վաղարշապատ գիւղը, որ այժմ Քէօփրիս քէյ կըսուի իւր քով գտնուած հոյակապ կամորձին համար և ճանապարհի վրայ է, Նիկամիտ արվարի չափու մի Ղապառ քէհէայի տունը կը բախէր, և ձիաւոր իւլարի կոթը գողցած էք ըսելով յիշեալ քէհէային քան և հինգ տարեկան որդին ատոր՝ ճանակաւ զարկաւ և սպաննեց: Զօրն անոնք կամ գորն խտտովանիմ, զի անթիւ են տանջանք մեր և անհամար վնաս մեր նիւթական...

Ներքէք, ազգասէր էֆէնտի, շատախօս ըլլալուս, յիշելով այն առածը որ կըսէ, «Աս նօրէնէն վնասուողը շատախօս կըլլայ»:

Ռուսոյ բանակը մեր մէջ գտնուած միջոցին, իւր ընթացքն և ըրած հարստահարութիւններն յաջորդ նամակիս թողով կը վերջացնեմ խօսքս, յիշելով Օսմանեան կառավարութեան այս անգամ եկած օրէն մինչև այսօր Բաւենի ժողովրդեանս ըրած կորուստը: Վանի Մուսա փաշան երբ Կարին մտաւ, Բաւեն ալ վաթսուտի չափ ձիաւոր զօրք խուրեց, որպէս զի պաշտպանեն քրիստոնեայ ժողովուրդը քիւրդերու և այլ բարբարոսաց զբոս կանցներէն: Իսմայիլ փաշան ալ վերը յիշած բաւենցի Յարօ գիւղացի Միւսթաֆա Իսմայիլ պէյը ընդհանուր Բաւենու կառավարիչ ընտրեց: Պէյ այդ նորընտիր կառավարչին թուրքերէն և թէ ձիաւոր զօրաց հրամանաւ

տարին թուրքերն ու անհոգութենէն մինչև այսօր երկու հայ միւս յիսուն տարեկան միւսն երեսուն տարեկան, մէկը ջաղացքին մէջ, իսկ միւսն Ազադ գիւղի մօտ ագանակեցին. հարբուր եղն, որոնց 44-ը Տէրի Պապս գիւղէն Նորայրեան Սերոր քէհայկներն է և իւր զրացեաց, մնացածն ալ Նորէ և Նէտիկ գիւղերուն, հարբուր ալ ոչնչար գողցուցան. բացի ասանցմէ քառասուն կամ յիսուն հազար զրուշի մօտ ասն վերաբերեալ ինչքեր գողցուցան: Մէկ խօսքով՝ ներկայիս մէջ մեր կեանքն և ստացուածքը վստահի մէջ է և տեղւոյս կառավարութիւնը մեզ պաշտպանելու անկարող է:

Ազգասէր տէր, Բաղէները «Մասիսի» դրացի ըլլալով, կը յուսամք որ նորա արէսներն ազնիւ «Մասիսի» քաղաքը գեղեցիկ կարծաւ նայնէք:

ԲՈՒԴԱՐԻՍ

«Journal de St. Pétersbourg» լրագիրը իր վերջին համարներէն մէկին մէջ հրատարակել է բոլորարացոց իշխան Ալէքսանդր Բատունի բերդի այն յայտարարութիւնը, որի մէջ նա պարզ յայտնում է այն քաղաքական նշանաւոր պրօքլաման, որին Բոլորիսն պէտք է հետևի:

Այս պրօքլամանից ամենից առաջ մենք տեղեկանում ենք, որ իշխան Ալէքսանդր I-ը միայն վեց շաբաթից յետոյ կընդունել իր պաշտօնը. իսկ մինչև այդ ժամանակ, նրա խնդիրը և թագաւոր-Ալյաքի համաձայն նութեամբ բոլորական իշխանութիւնը առաջնայ պէս կը մնայ Գոնդուփօ-Նորայրեանի կառավարութեան ներքոյ: Այս բանը վաղուց արդէն յայտնի էր մեծ պետութիւններին, և նրանց համաձայնութեամբ են կատարվում բոլոր այս կարգադրութիւնները: Իշխան Ալէքսանդր I ամենից առաջ կը զայ ճիշտօք, ուր հաւաքելով ազգային ժողովը, սահմանադրութեան կանոններն համաձայն, երդում կընդունի նրա առաջ, յետոյ ճիշտօք նա կուղևորվի Սօֆիա, որը պէտք է նրա իշխանութեան մայրաքաղաքը լինի, և ուր իշխան Գոնդուփօ-Նորայրեան ինստիտուցիաներ, նրա համար արդէն մի նոր պալատ է կառուցած:

Թարգելով իր ապագայ հպատակներին ազգասիրական գրգռմունքը, իշխանը կարելի եղածին չափ պատկասցում է իր օտարերկրեաց պալատականներին թիւը, նրանցից նա պահում է միայն իր ազնւոտներին: Իշխանական վարչութեան մէջ մի որոշ քանակութեամբ ռուս պաշտօնատարներ կը լինեն: Բոլորարական բանակում բաւալական և բօսնի կառավարիչներին փոխարէն ռուս օֆիցերներ կը լինեն:

Բոլորարայի կառավարութեան համար, Ալէքսանդր I-ին խոստացված է ռուսաց պետութեան «անհրաժեշտ և կարելի եղած» օգնութիւնը:

Իշխանը այն դիտաւորութեամբ է ծանապարհորդում զէպի եւրոպական մայրաքաղաքները, որ առաջինը քաղաքակարութիւնը պահանջում է, որ նա շնորհակալութիւն յայտնէ այն պետութիւններին, որոնք ձեռնառու են եղել բոլորարական անկախութիւնը հաստատելու, և երկրորդ, որովհետեւ իշխանը կամենում է, զնայով օտար պետութիւններին ներկայացուցիչներն մօտ, անձամբ և զէմ առ զէմ յայտնել նրանց թէ Բոլորիսն ինչքազաքական ընթացք պէտք է բռնի եւրոպայի վերաբերութեամբ: Այդ քաղաքական ընթացքը սատարի հետաքրքիր է ամբողջ եւրոպայի համար, որովհետեւ, ճշմարիտ, այնտեղ նկատագրված են ամենայն պարզութեամբ և ամենայն անկեղծութեամբ այն բոլոր յարաբերութիւններին մասին, որ Բոլորիսն պէտք է ունենայ բոլոր եւրոպական պետութիւնների հետ:

Իշխան Ալէքսանդրի տուած բացատրութիւնը երևում է, որ նա հաստատ մտքումը գրել է յարգել Բերլինի գաշնադրի այն բոլոր կանոնադրութիւնները, որոնք վերաբերում են բացառապէս բոլորարական իշխանութեանը: Նա անհրաժեշտ է համարում համոզել եւրոպային, որ բոլորարական իշխանութեան անկախութիւնը երբեք եւրոպայի ներքին խաղաղութեամբ չի մնալի, այլ թէ ընդհանրապէս նա հաստատ համոզված է, որ այդ երկրի անկախութիւնը միշտ միջնորդ ու հաշտարար կը հանդիսանայ որ և է երկապաշտութեան, և անկեղծ ու արդար ճանապարհներով կաշխատի արեւելքի խաղաղ զարգացման: Հէնց իսկ այս նպատակով է, որ նա կամենում է ստիպել եւրոպական կարիքներին, որպէս զի նրանք բոլոր խտութեամբ հսկեն Բերլինի գաշնադրի կանոններն իրագործման, որոնք սատարի մեծ կապ ունեն բոլոր նրա խաղաղական դիտաւորութիւնների հետ: Բացի այս բոլորը, իշխանի կարծիքով, Բոլորարայի խաղաղ զարգացման, և արեւելքի խաղաղութեան և ապահովութեան գլխաւոր և առաջնակարգ պայմաններից մէկն էլ այն է, որ արեւելեան Բուլղարիայում կարգ և խաղաղութիւն պահպանվի, որա համար անհրաժեշտ է, 1) որ բոլոր անկեղծութեամբ և բոլոր ճշգրտութեամբ գործադրվեն եւրոպական մասնագործի հիմնած օրդանական ստատուտները, և 2) որ սուլթանը իր խոստմանը համաձայն չը դրուէ թիւրքաց զօրքերով Բուլղարիայի մի քանի որոշեալ կէտերը: Այս նպատակով իշխանը կամենում է խնդրել եւրոպական պետութիւններին, որպէս զի նրանք բարեհաճեն Բալկաններում մի որոշեալ սահմանագիծ որոշել, որից միւս կողմը թիւրքաց զօրքերը իրաւունք չունենան անցնելու: Բացի այս նա յոյս ունի, որ իրան կը յաջողի Մակեդոնիայի ապստամբութեանը վերջ դնել մի քանի խաղաղ վերանորոգութիւններ խոստանալով նրանց:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍՏԻՑ

Վան, 14 ապրիլի

Մեր վերջին նամակաւ կը գրէիք թէ Պրուսացի նախորդ կուսակալ Ղալպ-փաշան և Ալաբեկեան Սարգիս էֆենդին Բ. Գոնդն բարեկարգութեանց գործադրութեան համար Հայաստանի մի քանի քաղաքները խրկուելու որոշումը և հրապարակել վրայ եղած թղթադրամները չըջարեւութեամբ բաժանալու համար ՏԵ ԹՕՐԻՍԻ փոխառութեան ծրագիրը և դուր մեզ հաւատացնել տւին թէ վերջապէս այն բարեկարգութիւնները որոց գործադրութեան համար եղած խոստումները ցարդ պիտի խօսքեր էին միայն, այս անգամ իրօք պիտի գործադրվին, մանաւաղ երբ թղթադրամը չըջարեւութեան բարձուի. նախքան այս նաւառքը որ արդէն տկարացած էր, այգիմ բոլորովին խախտուեցաւ, զի վերջին թղթադրամները լրագիրները տակաւին չը ծանուցին բարեկարգութեանց գործադրութեան համար Հայաստանի քաղաքները խրկուելու անձանց և Պրուսի միկնիլը և կասկածեցնել տուին մեզ թէ սա ևս ցարդ խոստացուած բարեկարգութեանց տեսակներէն է և ՏԵ ԹՕՐԻՍԻ փոխառութեան անջանդութիւնը դաժնցնել:

16,000,000 լիւրը թղթադրամը, որ մեր երկրին ամենամեծ տագնապներէն մինն է, Բ. Գոնդն նախ որոշեց 4,000,000 լիւրացով չըջարեւութեան բաժնաւ, սակայն երբ ՏԵ ԹՕՐԻՍԻ փոխառութիւնը չը յաջողեցաւ, ոչ միայն զանախ սպառումը պատճառով այդ որոշումը չը գործադրելով թղթադրամը հրապարակել վրայ ժողովրդեան ձեռքը թողուց, այլ նաև նախորդ տարիներու անվճար և ներկայ տարուց տուրքերուն փոխարէն ալ փոխանակ թղթադրամը մոտադրեաց դրամ կը պահանջէ: Նախորդ ամսոյ վերջեր տեղւոյս կառավարութիւնը կանչեց քաղաքի ամեն սեղանաւորները և տուգանք սպառնալով խախտ պատուիրեց որպէս զի թղթադրամը ոչ առնեն և ոչ ծախեն և սոյն նպատակին համար տեղանաւորներու քովը եղած բոլոր թղթադրամները զրկ առաւ:

Ինչպէս ամեն նահանգի ժողովրդին նոյնպէս ալ Վանի նահանգէն կառավարութիւնը և Պրուսի

առած հրահանգին համեմատ, ինչպէս լրագիրները ծանուցին, հանդիսակալութիւն կը պահանջէ թղթադրամը չըջարեւութեան բաժնաւ: Ի նպատակ 100-էն 60-ը ամեն արուեստը սոյն հանդիսակալութեան պիտի ծանուցնել իւրաքանչիւրը մէկ 100-նոց թղթադրամ վճարելով, թէ թղթադրամի և թէ հանդիսակալութեան որոշումին դէմ բողոքող 2000-ի չափ տնտրադրութեամբ հանդիսակալութեան տեղւոյս կառավարութեան մատուցուեցան, ապա կայն կարող չեղան նորա բարձր ուշադրութիւնը դրաւ և կամ անկէ կարեւորութիւն տեսնալու պատիւն ունանալ: Կարինէն առնուած ստեղծութիւնները կը գրեն թէ տեղւոյս կառավարութիւնը վահանաւորէն արտաքսեր է թղթադրամը հրապարակելն վրա թող տալու որոշման դէմ բողոքելու համար իրեն ներկայացուց ժողովուրդը, նոյս բողոքին բնաւ կարեւորութիւն չը տալով: Վերջին թղթադրամներու լրագիրներուն մէջը տեղւոյս կուսակալ Հասան-փաշայի առ Բ. Գոնդն ուղղած հեռագիր մը կարդայիցք, որ կը ծանուցանէր թէ Վանի հասարակութիւնը կ'աւան 100000 թղթադրամ նուիրած է գանձու. թողով որ արդէն նուիրուած թղթադրամի գումարը 100000-ի հասած չէ տակաւին, կը գամը յայտնէ թէ թղթադրամները երբեք կ'աւան նուիրուած չեն, այլ մեծ անհանգիստութեանց պատճառներով և ոչ նուազ բըւռնութիւններով, թէ ևս կան քանիներ ալ, որք կամաւ նուիրած են, սակայն անոնք չառ փութ մասը կը կաղմնեն և անկէ դատ հայերը չեն բնաւ, այլ կառավարութեան պաշտօնականներ և քիւրդերը:

1877-ին Շէյխ ձէլլատինի քիւրդերը ռուսական զօնդերու դիմաց պատերազմի երթալու համար քաղաքը հանդիպած ժամանակ, հայերը որք մատնաւորացաւ կողոպտուելու առաւել երկուդ ունէին, կամ առնէն գուրա չէին երեն որպէս զի չը կողոպտուէին և կամ հին հաղուստները կը հաղնէին որպէս զի եթէ կողոպտուէին ալ մեծ չըլար իրենց տուած կողոպտուելու միւս նոյն դրութեան մէջ են այգիմ նաև անոնք, որք ոսկի կամ արծաթ զարդ մը, օրինակ ժամացույցի չլիւս, մատանի և այլն կը կրեն իրենց վրայ, զի կառավարութիւնին յատկացուած պաշտօնակար տեսնալուն պէս վրայէն կ'առնեն նոյն զարդերը. կը ստուգեն որ կառավարութիւնը տուներն ալ խուզարկելով ոսկի և արծաթ անօթները պիտի հաւաքէ փողերանոց խրկելու համար թղթադրամը չըջարեւութեան բաժնաւ: Ի նպատակ Անա այս է Շէյխ ձէլլատինի քիւրդերու 1877-ին և կառավարութեան գործած հարստահարութեանց մէջեղ եղած տարբերութիւնը: 1877-ին հայերու հաղուստները կը կողոպտուէին և կողոպտուներն քիւրդերն էին, իսկ 1879-ին ոսկի և արծաթ զարդերը կը կողոպտուէին և կողոպտողը կառավարութիւնն է: Անաւակի ասոնք են այն բարեկարգութիւնները, զորս Պէրլինի գաշնադրի 61 երրորդ յօդուածը և յոճիս 4-ի Անկո-թըրքական դաշնագիրը կը խոստանային հայերէն բնակուած երկրներու համար. բարեկարգութիւնները, զորս բարեկարգութիւն և հարստահարութիւն բառերը իրենց հակառակ նշանակութիւններով հասկացող մը միայն կարող է հաւատալ թէ իրօք այս բարեկարգութիւններ են այս միջոցները, որք կը գործադրուին թղթադրամը չըջարեւութեան բաժնաւ: Համար, իսկ այն որ բարեկարգութիւն և հարստահարութիւն բառերը բռնեն բուն նշանակութեամբ կը հասկնայ, անկարելի է որ չը հաւատայ թէ հարստահարութիւններ չեն անոնք, որք կը գործադրուին կառավարութեան կողմէն, անկարելի է որ հաւատայ թէ Թիւրքիոյ հպատակները որ մը բարեկարգութեան երես պիտի տեսնեն, զի նա միանգամայն կը հաւատայ թէ կառավարութիւն մը, որոյ գանձը սպառուած է, որոյ ազդեցութիւնը ինկած է և պաշտօնականները անուսում և կեղեքող, կառավարութիւն մը որ մասնաւորապէս կը ջանայ իւր հպատակաց կարեւորութիւնը կորուսանել և զանոնք տարազգութեան դատապարտել, կառավարութիւն մը որ կը կարծէ թէ ինքը իւր հպատակաց հողերն և մարմնիցն միանգամայն տէր է, կարելի չէ որ նորա միջոցաւ բարեկարգութիւնները գործադրուին, թէ և հաղաբաւոր դաշնագիրներով, անկիւ երաշխաւորութիւններով և արթուն հակադրութիւններով ապահովուած ալ լինի:

300-ի չափ միակցի պանդուխտ հայեր և ասորիներ Ռուսիոյ Հայաստանի քաղաքներէն իրենց հայրենիքը վերադառնալու համար Տիւրքիայէն անցած ժամանակը, Տիւրքիայի մարտական տեսուչ Պէրլինի էֆենդին իրեն կուսակից հրոսակով մը նոյս վրան կը յարձակի, բոլոր դրամները, գոյքերը և մինչև իսկ ոմանց հանդերձները կողոպտելով ետ կը դառնայ, զէմ դրոյները չարաչար ձեռնելով և վերադառնալով վերադառնալու մէջը կայ նաև մի քանիս: Թշուառ կողոպտուները տեղւոյս կառավարութեան բողոքեցին, սակայն կարեւորութիւն չը ստացան տակաւին: Չէր ընթերցող

ները արդէն գիտեն թէ յիշեալ թշուառ պանդուխտներու Ռուսաստանի մէջ վստակած ընդամենը դրամը 20—30 ռուպլիէն աւելի չէ: Անա բարեկարգութեան մը գործադրութիւն մը, որ կընայ եւրոպական դիտաւորութեանց անհաշուաբար դրամ, զիւրաւոր կը կարծեն:

Անդադար քիւրդերէն և կառավարութեանց գործադրող հարստահարութիւնները չեն թողուր որ տեղեկութիւններ հաղորդեմը ձեր ընթերցողաց վանի յատկադիրական գործին վերաբերութեամբ, որ մեր փրկութեան միակ յոյսն է. սակայն թէ և կարելի է որ նախակը բաւական երկարի և ձեր լրագրի քանի մը էջերը լեցնէ պիտի հաղորդեմը քանի մը տեղեկութիւնները Ռուսաստանէր ընկերութեան և նորա տարեգրադի հանդէսին նկատմամբ:

Ապրիլ 7-ին Ռուսաստանէր ընկերութիւնը, որոյ նպատակն է ժողովրդեան մէջը ռուսումնասիրած և լրարանի, դատարանի, խօսարանի, թանգարանի միջոցներով, իւր Ա. տարեգրադի հանդէսը կատարեց Նորաշէնութեան երկերեցոյ լրակն մէջը, ուր է իւր կեղծանունով: Սոյն ընկերութիւնը որ յեղափոխական գործեր կատարեց Նորաշէնութեան մէջը, տարաբնուով որք մը ուր բուն յիտադիւնականներ որպէս զէն, կը բաղկանայ 30-ի չափ եռանդու երիտասարդներ: Հանդէսին ներկայ էր 400-ի չափ ժողովուրդ, քաղաքիս պատրիարքական փոխանորդը, երեմիա արքեպիսկոպոսը և տեղւոյս բողոքականաց միաբնակներէն պարոն Բիլի, որ առանց կ'ըքի ձայները լսելու առաջին անգամ կը ներկայանար ժողովրդական դպրոցի մը մէջը հաստատեալ ընկերութեան մը հանդէսին: Հանդէսին մէջը հանդիսակալութիւն եղաւ երեք մուրացի, կըրած բաղմաթիւ հարստահարութիւններէն զաղթելու ստիպուած տղաներու համար, որք գրեթէ բոլորովին մեղք էին, որոյ անորձեքը և առականքը բոլորովին մեղքանալով կերակային: Երիտասարդութիւնը գատուեցաւ սենեակով այս տղաները, որ հարստահարութեանց երեսնէն սոյն թշուառ միճակին դատապարտուած էին, և ուխտեց այն օրէն աշխատել որպէս զի հարստահարութիւնները բարձուին, հարստահարութիւնները, որոյ բարձուքը անհրաժեշտ է մեր յատկադիրական նախար:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 23 մայիսի: «ГОЛОСЪ» լրագրին հաղորդում են Վիեննայից մայիսի 22-ից, թէ ռուսները դատարկեցին Շիպկան: Նօյի-բաղարի մէջ արեւահակ կուլ պատահեց թիւրքաց զօրքերի և բաշխուղութեան մէջ:

Յիւլիոս Գոլ, 29 մայիսի: Այսօր եւրոպական յանձնաժողովը միաձայն հաւանութեամբ վճռեց անյապաղ յանձնել Ալէքս-փաշային կառավարութիւնը: Ալէքս-փաշան կապեց կառավարական մասը: Բոլոր պաշտօնների վրա նշանակված են բոլորարական ազգութեան պատկանող օսմանսն բարձրաստիճան պաշտօնականներ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 24 մայիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ Ամուր գետի և նրա ձիւղերի մօտը ավերից դուրս եկաւ և հերդեղեց արօտներ և կորեց գիւղերի միմեանց մէջ հաղորդակցութիւնները, այնպէս որ բնակիչները թողնում են իրանց տեղերը: Բլադովէշենսկօ քաղաքին ապաւնում է ծանր վտանգ: Ջրի մակերեւոյթը մի քանի տեղերում քաղաքից էլ աւելի բարձր է, որ պաշտպանված է հողակցներով: Բնակիչների մէջ տվ է յայտնվում: Ջուրը շարունակում է բարձրանալ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 24 մայիսի: Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 96 ռ. 50 կ., երկրորդ 95 ռ., երրորդ 95 ռ. 50 կ., չորրորդ 95 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսը արժէ 241 ռ. 50 կ., երկրորդ 236 ռ. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսը արժէ 92 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 25 կ., ոսկի 8 ռ. 40 կ.: Ռուսաց 1 ռուպլ Լեոնովի վրա արժէ 23, 75 պէնս., ռուսաց 100 ռուպլ Գեթմանիայի վրա արժէ 202 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 250 Ֆր.: Տրամադրութիւնը առաջ ամուր յետոյ թող է:

Խժբաղի-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն Ե Ր

ՄԻՔԵՅԻԼԵՆ ԿԼԵՄԵՆՏԻ մօտ Զուբարովի տան մէջ գտնուած Ն. Ա. ԴՕՍԱՐԱՅԱՌԻ «ՊԱՐՏԱՄՈՒՐԱԿՆԵՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ» գրաւով և պարտամուրհակով փոխ է տալիս, զընտում է առեւտրական ՊԱՐՏԱԹՂԹԵՐ, ծախում է ներքին փոխառութեան ՏՈՍՍԱԿՆԵՐ վճարը մաս մաս ստանալով, կատարում է զանազան ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մի և նոյն տեղը գտնուում է «ԽՈՐՀՐԴԱՅԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ» որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ «ԲԵՂԵՐԵՐԻ» ԲԵՂԵՐԵՐԻ ԵՒ ԵՆՈՒՆԵՐԻՆԵՐ գործերի մասին: Գրասենեակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, քրէական գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԵՒ ԵՆՈՒՆԵՐԻՆԵՐ: Ի նկատի ունենալ «ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԻ» ունեցած չափազանց ՀԼՏ աշխատանքները ցանկացողները հրաւիրւում են ԲՆԿԵՐԵՆԵՐ: Ցանկացողները պէտք է յայտնեն մինչև յուլիսի 1-ը:

Ներկայ 1879 թ.ի յուլիսի սկզբից, տէրութեան թղթաւորութեամբ, թիֆլիսի մէջ հրատարակւում է «ԵՆՈՒՆԵՐԻ» լրագրի չափով, քաղաքային գրականական շաբաթաթերթ «ԵՆՈՒՆԵՐ» իսկ և հայ լրագրներով հետեւեալ պրոգրամով:

- 1) Գրասենեակային ժամանակագրութիւն:
 - 2) Տեղական կեանքի ուսումնասիրութիւն: Թէ տնտեսական, Թէ վիճակագրական ու Թէ գիւղատնտեսական կողմերից:
 - 3) Գրականութիւն, գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ: Լինեն նրանք թարգմանութիւններ Թէ ինքնուրոյնութիւններ: Բնագրատութիւն իսկ և օտարազգի գրականութիւնների:
 - 4) Քաղաքականութիւն, քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:
 - 5) Մանր լուրեր:
 - 6) Մանրաւոր յայտարարութիւններ:
- «ԵՆՈՒՆԵՐ» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը, թիֆլիսում, առանց տուժ հասցնելու 5 ռուբլ:
- Տուժ հասցնելով 5 ռ. 50 փ:
- Ստանալ զանազան քաղաքային գրկելով 6 ռուբլ:
- Փոստային զանազանութեամբ գրկելով արտասահման 7 ռուբլ:
- Ստորագրութիւն ընդունում է թիֆլիսի կենտրոնական գրադաճառանոցում:
- «ԵՆՈՒՆԵՐ» շաբաթաթերթի համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարաքաղաքացիք պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գալը ուղարկել ուղղակի «ԵՆՈՒՆԵՐ» լրագրի խմբագրին այս հասցեով: Григорію Тер-Мелік-сегову, редактору газеты „Трудъ“, въ Сололакахъ, на Сололаковской ул. у Вознесенской церкви въ старомъ мосту въ Д. Михайла Галушкова подъ № 110.
- Իրիւթեր և անշուք հոգուածներ «ԵՆՈՒՆԵՐ» խմբագրութիւնը ընդունում է միմիայն և յատկապէս իսկ, հայ, ֆրանսիական և վրացական լրագրներով:
- Խմբագիր-հրատարակող Գրիգոր Տէր-Մելիքեան:

Ներսիսեան հայոց Ազգային-հոգեւոր դպրոցի աշակերտների տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետեւեալ կարգաւ:

Ամիս և ամսաթիւ	Դասատուներ	Առարկաներ
Մայիսի		
2	Ե. Զ.	Ռուսաց լեզու
3	Ե. Զ.	Հայոց լեզու
7	Ե. Զ.	Պատմական լեզու
11	Ե. Զ.	Ընդհանուր պատմութիւն
14	Ե. Զ.	Սկզբնական երկրաչափութիւն
15	Պատրաստականի 1 և 2 բաժանմունքները	Բոլոր առարկաներից
16	Պատրաստականի 3 բաժանմունքը	Հայոց լեզու և թուրքականութիւն
17	Պատրաստականի 3 բաժանմունքը	Միացած առարկաներից
18	Ե.	Կրօն և ծովաւ
22	Ե.	Նկերգական պատմութիւն
23	Ե.	Մանկավարժութիւն
25	Ե.	Ռուսաց պատմութիւն
26	Ե.	Կրօն և Սատուածաբանութիւն
28	Ե.	Ֆիզիկական և բնագիտութիւն
30	Ե.	Հայոց մատենագրութիւն
31	Ե.	Հայոց պատմութիւն
Յունիսի		
4	Ե.	Աշխարհագրութիւն
5	Ե.	Ընդհանուր մատենագրութիւն

I, II, III և IV դասատուանց գրաւոր քննութիւնները լեզուներից և մատենագրութիւններից լինելու են I և II դաստ ունեց մէջ մայիսի 22-ին և 23-ին իսկ III և IV դասատուանց մէջ մայիսի 24-ին, 25-ին և 27-ին:

Հարցաքննութիւնը մինչև մայիսի 26-ը լինելու է գլխի ճաշու 5¹/₂ ժամից և այնուհետև առաւօտները 8 ժամից, իսկ պատրաստական դասատուան քննութիւնները լինելու են նոյնպէս առաւօտները:

Պաշտօնակատար տեսչի Սրշակ Նահապետեան

Նրեանեան հրատարակի վրա ՔԱՍՏԱՆԿԻ կարավանարայի գէմուգէմը № 11. տան վերի յարկում վարձով տրվում է մէկ ԴԱՆԻՔԸ ծառայով, լաւ կարասիքով և առաւօտ-երեկոյն սամովարով զահլիճը մի բալկոն ունի իր առաջ: Գինն է ամսական 40 ռուբլ: Բացի զահլիճը մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԵՆԵԱԿՆԵՐ կարասիքով, ծառայով, սամովարով և լուսաւորութեամբ: այդ սենեակները ամսական արժէն 25, 20 և 15 ռուբլ: Այդ սենեակներում կարելի է նոյնպէս բնակւել: Հարցնել մի և նոյն տան դրան առաջ միւր ծախող ՅԱՊՈՒԹԻՆ:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ (ՍԻՐԺՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՈՒՄ)

- Վաճառում են հետեւեալ հայերէն գրքերը
1. Մինաս Զեբաղ ԳՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ 1 —
 2. — — — ԱԶԳԱՅԻՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ 1 —
 3. — — — ԻՆՁ ՇԱՀԵՑԱՆԻ ԲԵՐԼԻՆԻ ՎԵՂԱԾ 40 —
 4. — — — ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱՅ 60 —
 5. Առաքելեան ԳԵՌԳ. ՌՕԼԼԵՍՏՈՆ (Թարգմ.) 60 —
 6. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ՊԼՊՈ կոմիդիայ 3 ար. 60 —
 7. Բարբո՝ Երկամերի առ իրենց ծնողք պարտ. 40 —
 8. Տիգրանեան ծովարկայութիւն (կաղմած) 2 —
 9. Կոստանեան՝ Հիւսուածք 3 հատոր 3 —
 10. Պող և Վիդիլէ, ոսկեկալմ, գրաբար 3 50 —

Շուտով լոյս կը տեսնի Ազնաւորութիւն ՍԵՂՈՒՄՍԶ ՄԵՂՈՒ անունով գրքովը, թարգմանութիւն օր. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ, զեղեցիկ պատկերներով: գինը լինելու է 40 փ. գրքովը արժանապէս է առաջին ՊԱՐԳԵԼԻ Թրքերէնեան ընկերութեան վաճառվելու է ԿԵՆՏ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

Անցազիրների կանոնադրութեան XIV հատորի 1 յօդուածի համեմատ ոչոք իրաւունք չունի հեռանալ իր բնակութեան տեղից առանց օրինաւոր վկայութեան կամ անցազիր (յօդ. 2, 5, 4, 9, 10, 12, 13, 14, և 15 նոյն կանոնադրութեան): նոյն կանոնադրութեան 141 յօդուածի համեմատ մեշ չաները, բոլոր կարգի զեղեցիկ և ծառաները, որոնք իրանց բնակութեան տեղից բացակայ են և զանվում են կայսերութեան զանազան տեղերում 30 վերստ հեռաւորութեամբ իրանց բնակութեան տեղից արհեստներով կամ աշխատանքով ապրելու համար, պարտաւոր են տպված անցազիրներ ունենալ: Ծառայութեան մէջ զանվող և ծառայութեանց դուրս եկած աստիճանաւորների համար, նոյնպէս հոգեւորականների, կուսակիցների, սոցմական և անձնական աշխուակների, սրանց այրիները և անցազիր վերցնելու ձեւ մեկնած է անցազիրների կանոնադրութեան XIV հատորի 51, 52, 57, 59, 60, 63, 68, 71, 72, 75, 89, 92, 112, 118, 119, 139, և 142 յօդուածների մէջ: նոյն կանոնադրութեան 41 յօդուածի հեմեմատ ժամանակամիջոցը անցած անցազրով ոչոք ոչ մի տեղ ապրել չէ կարող: Այն անձները, որոնք ժամանակամիջոցը անցած անցազիրներ ունեն, կամ նրանց կորցրել են, պարտաւոր են անցազիրների կանոնադրութեան 42 և 211 յօդուածների համեմատ վարվել: Առանց օրինաւոր վկայութեան կամ ժամանակամիջոցը անցած անցազիրներով ապրողները, բացի այն որ պէտք է տան հարկաւոր վճարը անցազիր համար Հաշտարար դատաւորներից որոշված պատիժների կանոնադրութեան 61 յօդուածի համեմատ ենթարկվում են դրամական տուգանքի, որ լինելու օրը 15 կոպէկից և ընդհանուր գումարով 10 ռուբլուց ոչ աւելի: նոյն տուգանքի ենթարկվում են և նրանք, որոնք իրանց մօտ պահում են մարդկերանց առանց անցազիր, կամ ժամանակամիջոցը անցած անցազրով: Վերեւ մեկնած համաժամեցները ի նկատի ունենալ առաջարկում են Թիֆլիսի բնակիչներին, եթէ նրանց մօտ բնակվում են կամ ծառայում են այնպիսի մարդիկ, որոնք օրինաւոր անցազիրները չունեն, կամ որոնց անցազիրների ժամանակամիջոցը անցել է, այդ պիսիներին ներկայացնել իմ վարչութիւնը, հակառակ դէպքում այս պահանջը չը կատարվենք դատաստանի ենթարկվին Հաշտարար Դատաւորներից որոշված պատիժների կանոնադրութեան 61 յօդուածի համեմատ: Մի և նոյն ժամանակ հարկաւոր են համարում յայտնել քաղաքի պ. պ. բնակիչներին, որ այն անձներն են, որոնք կը բռնվեն առանց վկայականների կամ անցազիրների երբեք չեմ յանձնի մէկի պատասխանատուութեանը, այլ էտապով կուղարկեմ իրանց Հայրենիքը: Մայիսից 6 1879 թ. Թիֆլիս: Թիֆ-

լիսի գլխաւոր Պոլցիմէյստեր գեղապետ Մերկլինգ:

ԹԻՖԼԻՍԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ պատիւ ունէ յայտնել ընկերութեան պ. պ. անդամներին, որ ընկերութեան ԲՆԱԿԱՐԱՆԸ արդէն վարձված է Չիթախովի տանը, Գոյովիակի պրոսպեկտի վրա և խնդրում է անդամական ՏՈՒՐԲԸ չը վճարող պարոններին, նոյնպէս ընկերութեան անդամ գրվել ու, փող վճարելու և տունակ ստանալու համար ցանկացողներին դիմել ընկերութեան ստարշինա Պ. ՄԵՀՐԱԲՈՎԻՆ, Գոյովիակի պրոսպեկտի վրա, Նիսեփի տանը, խանութ № 5:

Ո՞վ ՈՐ ՊԱՏՈՒՄ Է ԻՐ ՀԻՌԵՐԻՆ նրանց թէյ է առաջարկվում, որից մի բաժակի տեղ կարելի է չորս բաժակ խմել: նոյնպէս սպիտակ ԿԱԼԵՆՎՈՐ, արշին 19 կոպ. և գեղեցիկ ՍՓՈՌՏԵՐ սեղանների և կամուրների համար ամառանոցներում, 1 ռ. 20 փ. և աւելի թանգ: գներով: ՍՏԵՓԱՆ ՄԱՆՎԵԼՈՎԻ խանութ, Գոյովիակի Պրոսպեկտի վրա, Միլիանի տան մէջ:

ԵՆՈՒՆԵՐԻ ԿԻՐԱԿԻ: ամսաց 27-ին առաւօտեան 10 ժամին, Կուլիցի տուրը Լյաուուածանայ եկեղեցի ԹԱՆԴՈՅԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԸ կատարելու է իր տարեգարծը և տաան և հինգ տարուան ՀԱՇՈՒԱՏՈՒԹԵԱՆ հանդէպը:

Մեղ խնդրում են յայտնել, որ մայիսի 29-ին ՓՈԹԻՅՑ դուրս գալու է, եթէ եղանակը աջող լինի, ուղևորվելով դէպի Կ. Պոլիս և Մարսէյ, ֆրանսիական «Les Vosges» շոգեխաւը, որի կապիտանն է պ. Պալուս:

200 տախա ՅԵՄԵՆՏ (Պօրտլանդի) ստացված է: Դիմել արևիտէկտոր պ. ՍԿՈՒՆՆԻՆ, Արեւնայայ փողոցում, Տէր-Առկասովի տանը: